№ 50 ՈՒՐԲԱԹ ՄԱՐՏԻ 7 — 1903 — ՈՒՐԲԱԹ ՄԱՐՏԻ 7 № 50

ԵՐԵՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում դրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ

ԼՐԱԳԻՐԸ

1903 թուին

12 ամսվանը	. . . .	10 ռուբլի
11 »	. . . .	» »
10 »	. . . .	9 »
9 »	. . . .	8 »
8 »	. . . .	» »
7 »	. . . .	6 »
6 »	. . . .	» »
Մնացածները ամսական		1 »

Եւրոպայում՝ 30 ֆր., Ամերիկայում՝ 6 դոլար, Պարսկաստանում՝ 10 ր.

Հասցէն՝ Тифлисъ. Редакція „Мшакъ“.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Օժանդակ ճիւղեր.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ Անշարժ մնդիկը. Նամակ Շամախուց. Նամակ Կաղզուանից. Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Պարսկաստանից. Լեհերու դիմումը մայր աթոռ. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. — Գինեգործների համաժողովը Օդեսայում

ՕԺԱՆԴԱԿ ՃԻՒՂԵՐ

Գօրու գաւառի կալուածատէրերից մէկը, Գ. Ժուրուլի, մշակել է երկաթուղային ճիւղի մի նախագիծ, որը մոռդիր է առաջարկել ազնուականութեան ժողովի քննութեան: Այդ նախագծով Ժուրուլի կամենում է միացնել Գօրի քաղաքը Ցխինվալի հետ երկաթուղիով և այդպիսով Ցխինվալի շուրջը գտնվող գիւղերի համար հնարաւորութիւն ստեղծել անմիջական յարաբերութիւններ սկսելու բոլոր այն կենտրոնների հետ, որոնք գտնվում են Անդրկովկասեան երկաթուղային գծի վրա:

Մենք արդէն մի անգամ առիթ ենք ունեցել յայտնելու մեր կարծիքը երկաթուղային օժանդակ ճիւղերի կարևորութեան մասին Անդրկովկասում: Մենք մատնացոյց լինելով այն հանգամանքի վրա, որ մեր Անդրկովկասի կանոնաւոր զարգացմանը շատ վնասում է հաղորդակցութեան միջոցների անտանելի վատ վիճակը, ցանկութիւն էինք յայտնել, որ ամեն կերպ աւելացնվեն կատարելագործված ճանապարհները և մասնաւորապէս կանգ էինք առել երկաթուղային օժանդակ գծերի անհրաժեշտութեան վրա: Այդ տեսակէտով շատ ցանկալի էինք համարել այնպիսի ճիւղեր, ինչպիսիները կարող էին լինել Շամախուց, Ղուբայից, Նուխուց, Կողբից, Իգդիրից, Ախալցխայից, Շուշուց շինած երկաթուղային ճիւղերը դէպի գլխաւոր երկաթուղային գծերը: Այդ և դրանց նման ճիւղերը մեծ դեր ունեն խաղալու մեր երկրում, որի համար հաղորդակցութիւնը կարևոր է ոչ միայն տնտեսական պատճառներով, այլ և տեղագրական ու կենցաղավարական հանգամանքների շնորհիւ:

Երկաթուղային այն ճիւղը, որի նախագիծը առաջարկում է Ժուրուլի, կարող է էական նշանակութիւն ունենալ Գօրու գաւառի մի նշանաւոր մասի համար: Նա կապում է մեծ վաճառականոցները մի արգաւանդ երկրի հետ, որտեղ կարող են ծաղկել և բարգաւաճել այգեգործութիւնը, երկրագործութիւնը, անտառաբուծութիւնը և անասնապահութիւնը. նա մի և նոյն ժամանակ մօտենում է Կովկասեան մեծ շղթային, լեռնային Օսեթին, որտեղ ապրում է մի բուռն ազգաբնակութիւն իր առանձին զբաղմունքներով:

Անկասկած՝ երկաթուղային գիծ շինելը լուրջ գործ է, որ պահանջում է ամբողջ կազմակերպութիւն և ծանր ծախքեր: Բայց տեղական ինքնագործունեութիւնը չը պէտք է վախենայ այդ դժուարութիւնից, եթէ աջողութիւնը կախված է միայն եռանդից և աշխատանքից: Մենք շատ ուրախ կը լինէինք, եթէ տեղական ինքնագործունեութեանը աջողվէր գործնականապէս իրագործել մի քանի այդպիսի ձեռնարկութիւններ և այդպիսով թէ օրինակ դառնար միւս տեղերի համար և թէ ապարէզ բանար տեղական դրամագլուխների շահագործութեան համար:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆՇԱՐԺ ՄՆԴԻԿԸ

«Գինեգործից դուրս ազատ ժամերս ես նուիրում եմ անտեսական գործերի. խոհանոց եմ յաճախում, սովորում եմ կերակուրներ պատրաստելը, դասերիցս յետոյ սովորում եմ կար ու ձև, նոյն-իսկ գուլպա գործել: Բացի այդ, պատրաստվում եմ և քննութիւն տալու՝ դաստուի իրաւունք ստանալու համար: Եւ այս բոլորից յետոյ, սիրելիս, մի՞թէ կարելի է գոյութեան կռուից վախենալ: Ո՛չ. երբէք: Մենք միասին կաշխատենք. մենք անկախ կը լինենք և վարելով հանեսա կեանք՝ ապահով էլ կը լինենք: Ոչինչ ինձ չէ կարող յուսահատեցնել, վշտացնել. ոչ մի աշխատանք ինձ համար դժուար և ծանր չէ կարող լինել, քանի որ այդ բոլորը ես անելու եմ քո անկեղծ սիրոյ համար»...

Մի հարուստ մեծատան աղջիկ, գինեգիայի վերջին դասարանի աշակերտուհի, այսպէս էր գրում իր սիրեցեալին, որը դժբախտութիւն ունէր չը պատկանելու նոյն դասակարգին, չը պարծենալու իր ստացած ժառանգութիւնով և ապրում էր իր դաղը և չարքաշ աշխատանքով:

Ի՞նչ կարիք կայ յիշել այդ բոլորը,—կը հարցնէ ընթերցողը. չէ՞ որ այդ բոլորը հին ժամանակների սեփականութիւն էին, որոնցից վաղուց ենք հեռացել: Այո, հեռացել ենք, բայց ոչ մոռացել: Հէնց ցաւն էլ դրանումն է: Իրերի բնական ընթացքում, էվոլիւցիայի յայտնի օրէնքների հիման վրա—այդ շրջանը պիտի լինէր մի ժամանակ և անցնէր՝ վերջնականապէս սեփականութիւն դառնալով ժամանակագրական բոմանի: Մասամբ այդպէս էլ եղել է: Այդպիսի անյոյս սիրոյ, ազնիւ արիւնը պրղտորող սիրոյ նկարագրութիւններ տուել են մեզ Բաֆֆին, Գամառ-Քաթիպան և ուրիշ շատ հեղինակներ: Գամառ-Քաթիպան ուղղակի ասում է իր մի հերոսի բերանով. «ես այդպիսի անփոխանաներին աղջիկ չեմ տայ»: Ժամանակի ամբողջ ոգին արտայայտված է այդ նախադասութեան մէջ:

Շատ է փոխվել այդ ոգին մինչև այժմ: Դիտելով կեանքը՝ ես կասեմ, որ իսկի էլ չէ փոխվել: Փոխվել են ուրիշ կողմնակի պայմաններ, որոնց պատճառով անցած ժամանակվայ նման դրամաների թիւը պակասել է, բայց չէ փոխվել ոգին, չեն ողորկվել այն խցիկի պատերը, որտեղ պատապարված են այդ հոգու արտայայտութիւնները: Ներմաչափը ոչ մի փոփոխութիւն չէ ցոյց տալիս. մնդիկը անշարժ է, քարացած: Հայը շատ բան է փոխել իր կեանքում. նա յաճախ, շատ դէպքերում, եւրոպականից էլ է դէն անց կացնում իր քայլերը, բայց միայն արտաքին, մակերևոյթային աշխարհում: Դրանից յետոյ նա նոյն բռի, կոպիտ հասկացողութեան մոլի երկրպագուն է: Արտաքին փայլը, որով ծածկել է նա իր հնադարեան գոհարները՝ շատ անշնորհք է պարտկելու համար իրանց խնամատարութեանը յանձնված ստրուկներին: Հայի տիրացուական ոգին, նրա անշարժ, լճացած հասկացողութիւնների ամբարը իսկի չէ շարժվել, իսկի չէ թարմացել:

Վերցրէք մեր դիպլոմաւոր դասակարգը. կարծում եմ, տարիների ընթացքում մեր մամուլը փառաւոր կերպով ապացուցել է նրանց հոգու աղքատութիւնը, նրանց՝ իրանց պաշարի արժանաւոր ժառանգ չինելը: Նոյն չարչին, նոյն գծուծ վաճառականը՝ նոր եւրոպական տարազով, աստղերով, վկայականներով, դիպլոմներով... Վերցրէք մեր ինտելիգենցիան ընդհանրապէս. մի՞թէ նրա նապաստակային փոքրոգութիւնը, նրա մտավախութիւնը, նրա՝ գաղափարական գործունէութիւնից վախենալը չեն ապացուցում նոյն չարչու, նոյն վաչխառու կամ գծուծ առևտրականի արժանաւոր զաւակ լինելը:

Եթէ այդ բոլորը այդպէս է, եթէ տարիների ընթացքում ուսումը, եւրոպական քաղաքակրթութիւնը, լոյսը անկարող են եղել օրինաւոր, չոչափելի կերպով փոխել հային, պարզ ներկերից պատրաստված գինի՝ այն ժամանակ չէ կարելի, որովհետև այդ կը մեռցնէ «գինեգործութիւնը»... (Ես կարծում էի, թէ պայծառափայլ իշխանը պէտք է ասէր «մարդկանց»)...

Նախ.—Այժմ գինու մասին չենք սահմանի որոշ հասկացողութիւն. կը խօսենք ընդհանրապէս գինու մասին, մինչև երկրորդ սեկցիայի պարապմունքների զեկուցումը:

Մի անգամ յայտնում է, որ գիւղատնտեսութեան կարիքների մասին Քիշինեվի գաւառական կոմիտէտը որոշել է խնդրամատոյց լինել ուր հարկն է, որպէս զի արգելվի գիւղերում գինի ծախելը, որովհետև դրանով տարածվում է ընդհանուր արբեցողութիւն: Համաժողովը պարտական է նոյնպէս վարվել և ուչ...

Նախագահ (ընդհատում է).—Գաւառական կոմիտէտի որոշումը մեզ համար պարտաւորեցուցիչ չէ, և ձեր յայտարարութիւնը շատ յանդուգն է... Ես ինքս այդեղտէր եմ և գիտեմ, որ այդպան գիւղացիք յաճախ իրանք են խրմում իրանց գինին»... Ուրիշները ապացուցանում են յօգուտ յանձնաժողովի: Այնուհետև առաջարկվում է՝ որպէս ընդհանուր չափ ամբողջ Ռուսաստանում ընդունել արքունական վեդրօն, որ և համաժողովի կողմից միաձայն ընդունվում է: (Ես չը գիտեմ, բայց ենթադրում եմ, որ երևի արքունական վեդրօն սովորականից քիչ փոքր է... այդ պատճառով էլ ընդունվեց այդ առաջարկութիւնը, այլապէս նա այդպէս հեշտութեամբ երբէք չէր անցնի):

Երկրորդ սեկցիա

Ֆալսիֆիկացիայի վերաբերեալ հարցով վճռվեց զբաղվել վերջին ընդհանուր ժողովում:

Երրորդ սեկցիա

Այդ սեկցիայի նախագահը կարդում է իր զեկուցումը այգեգործական և գինեգործական կայարանների մասին և այլն:

Դպրոցների տիպի մասին շատ խօսվեց: Քիշինեվում գոյութիւն ունի գինեգործական դպրոց, որի մասին առաջարկութիւն եղաւ անուանել նրան միջնակարգ, որ և ընդունվեց:

Դօնի ներկայացուցիչներից մէկը ասաց, որ այդ տեսակ դպրոցների մեծ կարիք են զգում և գինեգործական միւս շրջանները և խնդրեց միջնորդել այդպիսի դպրոց բանալու և գինեգործութեան մի այլ խոշոր կենտրոնում՝ Ռոստովում:

Նախագահը ցանկալի համարեց այդպիսի դպրոցը և Ուսմանում: Երկու առաջարկութիւններն էլ ընդունվեցին: Եթէ թղթակիցները ձայն ունենային՝ ես կառաջարկէի որ Գանձակը, Շամախին կամ Երևանը նոյնպէս այդպիսի դպրոցի մեծ կարիք ունեն... իսկ ներկայ եղող կովկասցիներից առաջարկող չեղաւ...

Ժողովը ցանկալի է գտնում—հիմնել խաղող-գինեգործական գործնական դպրոցներ. միջնորդել երկրագործութեան մինիստրութեան առաջ՝ հիմնել հնարաւոր եղածին չափ մեծ թիւով—գինեգործութեան գործնական ստորին դպրոցներ բանուորների համար. հիմնել գոյութիւն ունեցող գիւղատնտեսական դպրոցներում բանուորների և այգեպտէր գիւղացիների համար կարճատև գործնական կուրսեր. հիմնել գինեգործութեան շրջաններում խաղողի պատուաստման և վազերի ընտրութեան համար կայարաններ:

Իշխան Գալիցին առաջարկում է հարաւում բարձրագոյն գիւղատնտեսական դպրոց հիմնել՝ գինեգործութեան դասընթացքներով: Ի լրումն այս բոլոր «ցանկութիւնների» նախագահը առաջարկում է միջնորդել՝ Նովորոսսիյսկի համալսարանում գինեգործութեան ամբիոն հատատել: Բոլոր առաջարկութիւնները ընդունվում են:

(Կը շարունակվի)

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԻՆԵԳՈՐԾՆԵՐԻ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ ՕԴԵՍԱՑՈՒՄ

III

Առաջին սեկցիա

Գինեգործութիւնը Ռուսաստանում չէ զարգացած. գինու արդիւնաբերութիւնը չէ անցնում 22 միլիոն վեդրօյից: Նրա արտահանութիւնը երկաթուղիներով, չնորհիւ մի շարք դժուարութիւնների՝ նոյնպէս աննշան է. այգիների խոշոր մասը Ռուսաստանում պատկանում է գիւղացիներին: Աջող պայմանները կարող էին զարկ տալ գինեգործութեան: Սեկցիան մշակել է մի շարք միջոցներ: Նա ի միջի այլոց առաջարկում է միջնորդել՝ չինել գինու և մրգերի յատուկ վագոններ վառարանով ի հաշիւ ուղարկողի (խօսքը վերաբերում է ձմեռային տեղափոխութեան) վերակացուի ուղեկցութեամբ: Միջնորդել՝ որ երկաթուղիների վարչութիւնը ներկայացնէր վագոններ, յարմարեցրած մրգերի փոխադրութեան համար կողովներում: Միջնորդել՝ որպէսզի գինու և մրգերի քանակութեամբ արտահանութիւնը կատարվի արագութեամբ, առանց երկարատև դադարների ճանապարհներին. սահմանել չիշերի և դատարկ անօթների վերադարձնելու համար էժանացրած տարիֆ: Ցանձնաժողովը կարևոր է գտնում միջնորդել գինու առևտրի պայմանները դիւրացնելու համար: Նա անհրաժեշտ է համարում միջնորդել՝ բազմացնել խմելու տեղերի քանակութիւնը. միջնորդել... բազմացնել մառանների և տրակտիրների թիւը քաղաքներում և գաւառներում՝ ըստ ազգաբնակութեան քանակութեան... Բացի այս բոլորից՝ սեկցիայի և յանձնաժողովի նախագահը յայտնում է, որ մի քանի տեղերում արքունի մենաւաճառը մոցնելով՝ գինեաների թիւը սաստիկ քչացել է, որ... ցանկալի չէ... Բացի դրանից միջնորդել, որ գինի ծախելու իրաւունքից զրկեն տէրերին միայն դատարանի և հասարակութեան վճռով: Սեկցիան ակցիզի պրօէկտի մասին ոչինչ չէ արել, աչքի առաջ ունենալով ֆինանսների մինիստրութեան ներկայացուցչի յայտարարութիւնը:

Այս զեկուցման ընթերցումից յետոյ երկրագործութեան մինիստրութեան ներկայացուցիչը, գինի խմելու տեղերի քանակութիւնը բազմացնելու հարցի մասին հետաքրքրվում է գիտենալ. «կամենում է արդեօք համաժողովը այդ հարցը դրական մտքով թոյլատրելով ցանկանալ՝ որ Ռուսաստանում սկսեն գինի շատ խմել... ստիպեն մարդկանց գինի խմել»...

—Ցանկանում ենք, ցանկանում ենք, ցանկալի է... լավում են ձայներ:

—Կը նշանակէ, ժողովը, հարցնում է նա նորից ծաղրելով, ցանկանում է, որ Ռուսաստանում շատ գինի խմեն...

—Շատ, շատ...

Ոմանք արդարացնում էին ժողովականներին, թէ հարցի խմբագրութիւնը ճիշտ չէ. հարցը պէտք է այսպէս դնել: «Ցանկալի է, որ ալկոհոլ պարունակող խմիչքներից գինուն, որպէս առողջարար, քիչ ալկոհոլ պարունակող խմիչքի՝ առաւելութիւն տրվի»...

—«Ես ոչինչ չունեմ», ասում է Իշխան Գալիցին, «գինի վաճառելու տեղերը բազմացնելու դէմ. բայց կարևոր է գիտենալ, թէ ինչ պէտք է խմէ այնտեղ ժողովուրդը: Եթէ պէտք է տան «չաքարովցրած» գինի և յայտնեն, որ այդ գինու մէջ չաքար կայ,—ոչինչ. բայց եթէ ճակնդեղից և այլ

է, որ ոսկու մի պարկից չէ կարելի ապասել, որ նա իր աղջկանը, իր արեան մի մասը զանազանէ իր խանութում դարսած հազար ու մի տեսակ-տեսակ ապրանքներից և նրա հետ վարվելով ինչպէս մի բանական արարածի հետ՝ նրա բախտը տնօրինէ առանց որևէ չարչիական դիտողութիւնների և հաշիւների։

Բայց անդիկը անշարժ, քարացած է, և նրա տախտակի վրայից չէ ընկնում հնդարեան ցուցանակագիրը. «անփոխանակներին աղջիկ չեմ տայ...»։ Ով և երբ պէտք է վերջացնէ և շարժէ այդ անդիկը։

Ռ. Յովհաննիսեանց

Բագու

ՆԱՄԱԿ ՇԱՄԱԽՈՒՑ

—

Փետրվարի 20-ին

Երկրաշարժից վնասվածներին օգնող կոմիտէտը անցեալ աշնան վերջին փակեց իր գործունէութեան երկրորդ շրջանը, որ աւելի մեծ էր քան սկզբնական շուտափոյթ, անկանոնութիւններով լի շրջանը, որի մասին իր ժամանակին հաղորդված էր «Մշակին»։

Այժմ մենք կը ծանօթացնենք «Մշակի» ընթերցողներին այն գործունէութեան հետ, որ տեղի ունեցաւ այնուհետև—ամառվայ և աշնան ամիսներում։

Ամենքին յայտնի է արդէն, որ երբ անցեալ տարի Շամախում և իր գաւառում պատահեց սոսկալի երկրաշարժը, այդ լուրը կայծակի արագութեամբ տարածվեց ամեն տեղ և պետութեան ամենահեռաւոր անկիւններից անգամ օգնութեան հասան մարդասիրաբար, թեթևացնելու տառապեալների վիշտը։ Սրա հետ միաժամանակ երևաց, թէ մարդիկ միմեանց օգնելու ու միխիթարելու սիրտ ունեն դեռ և այդ բանը ամենակենդանի կերպով ապացուցեցին հազարաւոր աշխատաւորներ, դռնէ-դուռ ընկնող, գուցէ և կօպէկներով փող ժողովողները, ապացուցեցին նաև 100 հազարաւոր զանազան նպաստ նուիրող զգայուն սրտերը։ Մի խօսքով հասարակութիւնը կատարեց իր պարտականութիւնը։ Բարոյական և նիւթական օգնութիւնը կատարեալ էր։ Բայց ո՞րքան չահվեց այդ կարեկցութիւն, նոյն-իսկ արտասուք չարժող ժողովուրդը։

Ժողովրդական մի ասացուածք կայ. «Հունարը աշխատելը չէ՝ այլ հունարը ծախսելն է»։

Նահանգական կոմիտէտի անդադար փոխադրած տասնեակ ու հարիւր հազարները, գործադրող մարմինը, այսինքն գաւառական կոմիտէտը ծախսում էր։ Դեռ գործի սկզբում կոմիտէտի խորհուրդում եղան նկատողներ, որ գործադրութիւնը շատ էլ խելացի կերպով չէ կատարվում. պիտի խնայել մարդկանց նուիրատուութիւնները, որոնց մէջ կան օրվայ հացից կտրած կօպէկներ. պիտի նրանց ծառայեցնել տեղն ու տեղը, այն է՝ երկրաշարժից վնասվածների օգտին, երկրաշարժից վնասվածների, որոնց անունով հանգանակութիւններ են բացված և նոյն անունով փողեր են ստացվում. երկրաշարժից վնասվածների, որոնց օգնելու անունով նահանգական և գաւառական կոմիտէտներ են հաստատված։ Եւ ինչ էք կարծում, ընթերցող, ինչ պատասխաններ էին լսվում։ Այն, որ բաւական է եթէ գումարի 40—50%-ը կը ծառայէ նպատակին։ Զարմանալի չէ թերում թէ՝ ինչու 100%-ն էլ չը պիտի ծառայէր իսկական տեղին—երկրաշարժից վնասվածներին, որոնց մէջ եթէ մէկը հազարներ վնաս է ունեցել, նա սև կօպէկ անգամ չէ ստացել։ Բայց ուր էին գնում եկած գումարները։ Ահա թէ որտեղ։

Այն օրից, երբ քաղաքի չինութիւնների նորոգութեան վրա արդէն դրվեց և յայտնվեց, որ նոր տեղեր են բաժանում, բացվեց մի մեծ հոսանք հողաբաժիններ խնդրողների, որոնց համար շատ ձեռնտու էր իրանց յափշտակած և երկբայելի գետինը թողնել, իրա միջի փլված անասունի գանգերից չինած 30—50 ռուբլիանոց տնակով և նոր ու հաստատ տիրապետութեան պայմանով գետին ստանային 250—300 ռուբլի գումարով. մի գումար, որ ստացողների 70—80%-ը իր օրում չէր տեսել և հաւանականօրէն չէր էլ տեսնի։ Մէջքեր էին դուրս վազողները և չաղ պատառը ստացողները. նրանք, որոնք թէև տուն, տեղ, կարողութիւն ունեն, բայց ունէին նաև աչքից թող արած, մի փոքրիկ աղբանոց դարձած գետին ևս, որը շատ ձեռնտու էր հանգամանքից օգտվել և փոխել նորի հետ և ստանալ յիշեալ գումարը և 50 պուդ կիր։ Եւ այդպիսով գոյացան 1100 տուն, որոնց իւրաքանչիւրը ստացաւ միջին թւով 300 ր. թէ փողով և թէ այլ չինարարական պարագաներով. ընդհանուր գումարը հասաւ մօտաւորապէս 300—330 հազար ռուբլու։ Այս 1100 տունը տեղաւորված են քաղաքի շուրջը, հինգ առանձին կէտերի վրա, որոնցից իւրաքանչիւրը իր տեղում կղզիացած ինքնուրոյն ոչ մի գործով պարապել չէ կարողանում. իւրաքանչիւրը դրսնցից ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի-մի գիւղ. ժողովրդի մեծամասնութիւնը, մինչև 2500 տուն, իր տեղից չէ շարժվել. ուստի գործն էլ, առևտուրն էլ կենտրոնացած են նախկին տեղերում և շուկայում, որոնց հետ բնականաբար գործ ունեցողները—արհեստաւոր, վաճառական, ծառայող և այլն, դատապարտված են ամեն օր անտանելի ցեխերի մէջ և սառնամանիքում ու շոգում մի քանի գլուխ թրև գալով, վերատեր անցնել և պարապել իրանց հաց տուող զբաղմունքով։

Իսկապէս դա անտանելի է, դա պատիժ է, և շատերը, անիծելով իրանց օրը, դարձեալ յետ են փախչում և պատսպարվում հին քաղաքում։

Ս. Սարգիսբէկեան

ՆԱՄԱԿ ԿԱՂԶՈՒԱՆԻՑ

—

Փետրվարի 20-ին

Վերջին երկու տարվայ ընթացքում մեր հասարակական կեանքը այն աստիճան ապականվել է, որ ամենանուիրական սրբութիւններն անգամ գերծ չեն մնում անարգանքից։ Ընտրեցեալների տներում «քէֆ» անել, գնալ գերեզմանոց հանգուցեալների գերեզմանաքարերը խմիչքով ողողել, գինետներում հարբել, դուրս գալ փողոց և հանդիպողներին հայհոյել, մտնել կասկածելի տեղեր, թուղթ ու «խումար» խաղալ՝ տանուլ տալով ոչ միայն տան ամենակարևոր կահկարասիները, այլ և բարեկամներից խաբեբայութեամբ պարտք առած (իբրև իրանց ընտանիքի կենսական կարիքների համար) գումարները, ապա գազազած՝ տուն վերադառնալով կնոջ, երեխաներին ծեծել—այդ բոլորը արդէն իրականացած է մեզանում. այժմս էլ մի այլ նոր ձևի ախտ է ծնունդ առել, որը չատապում եմ հրապարակ հանել, որպէս զի այդ նոր չարիքն էլ սովորութիւն չը դառնայ։

Ամիս 9-ին մի խումբ մարդիկ, որոնց մէջ կային նաև եւրոպական ձևով հագնված երիտասարդներ, մի ընտանեկան գրական երեկոյթ էին կազմել հանդիսականներին մի բարի օրինակ ցոյց տալու, ուր կարդացվել էին ճառեր, գեղեցիկ ոտանաւորներ, երգեր և որից վերջը սկսել էին կոնծաբանութիւնը... Թէև մասնակցողներից մեծ մասի սովորութիւնն է այդ կոնծաբանութիւնը, բայց երբէք իրաւունք չէ տրվում նրանց միենոյն անմաքուր ոտքերով մտնել նաև արդէն նուիրական դարձած հանդէսների մէջ, և մի նոր չարութեան օրինակ էլ աւելացնել մեր՝ առանց դրան էլ ապականված կեանքի մէջ։ Դրանց այդ վարմունքը յիշեցնում է անմահ Կրիլովի—կենդանիների կազմած «քառաձայն»-ի (квартетъ»-ի) մասին գրածը։

Իր հարազատ կնոջը կացնի հարուածներով սպանող մարդ-գազանը արդէն բանտարկված է հակառակ իր կարծիքին, որ, հաւատալով իր ազգականներից մէկի խորհրդին, հեշտութեամբ պէտք է ազատվէր մարմնաւոր իշխանութեան ձեռից և մի նոր կին առնելով՝ երջանիկ կեանք պէտք է վարէր։ Թէև մի քանի ցածահոգիներ ամեն տեսակ միջոցներ էին ձեռք առել չարագործութիւնը ծածկելու համար, բայց եղբայրը հասնում է հէնց այն ժամանակ, երբ դժբախտ զոհը Յովհ. ք. Թումասեանի ձեռքով պատանքած, սպասելիս են եղել վկայականի, որի համար յատուկ մարդիկ են ուղարկվել մեր տասնուտէր՝ Ֆ. Կարապետեանի մօտ, ուր և վկայել և երդվել են, որ յիշեալ կինը շատ վաղուց ջերմում է եղել ու մեռել է միենոյն հիւանդութիւնից։ Այնու ամենայնիւ, տասնուտէրը չէ տուել վկայական մինչև որ ինքը անձամբ տեսնէ և ստուգէ—այդ պատիւ է բերում նրան։ Այդպիսով այդ ցածահոգիների ծրագիրը հիմն ի վեր խորտակվում է։ Զոհի եղբայրը իսկոյն յայտնում է կառավարութեան։ Հետևեալ օրը քննիչի ներկայութեամբ անդամահատութիւն եղաւ, որից պարզվեց, որ գազան չարագործը հարուածներով ուղղակի ջարդել էր։ Մարմնի վրա 8 հարուածներ կային, որոնցից երկուսը, բժշկի ասելով, մահացու էին, մէկը ձախ կողմի ծծի վրա էր, որտեղ կրծոսկրներից 4-ը վեց տեղով կոտորվել էին։ Մթթէ այս տեսակ պարզ ճշմարտութիւնը, այս գազանային չարագործութիւնը կարող է երբ և է, որևէ միջոցով ծածկվել... որի համար աշխատում են միենոյն ցած մարդիկ փող ծախսելով ու ստեր խօսելով։

Մեր պրիստաւ Կ. Զամենապուլօն, որ յիշեալ չարագործութեան միջոցում բացակայ էր տեղիցս, այժմ եկել է և, լսում ենք, որ ամեն ջանք գործ է դնում չարագործութիւնը աւելի լաւ պարզելու համար և ստոյգ ցուցմունքներ տուողներին էլ օրինական ճանապարհով պատժել տալու համար։

Մ. Ղազարեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Փետրվարի 27-ին, ներքին գործերի մինիստր Ֆօն-Պլէվէի նախագահութեամբ, սկսվեցին այն մասնաժողովի պարապմունքները, որ պէտք է զբաղվի նահանգական վարչութիւնների վերակազմութեամբ։ Մասնաժողովի պարապմունքներին մասնակցում են Պետերբուրգի, Սամարայի, Խարկովի, Մոգիլեովի և Պսկովի նահանգապետները։

—

Երէկ տեղի ունեցաւ Կովկասեան թանգարանի վերատեսուչ Ռադդէի յուղարկաւորութիւնը իր բնակարանից դէպի երկաթուղու կայարանը, որտեղից հանգուցեալի մարմինը կուղարկվի Լիկանի կալուածքը Բորժոմի մօտ, այնտեղ հողին յանձնելու։ Ռադդէի յուղարկաւորութեանը ներկայ էին մեծ բազմութիւն, որի մէջ էին և Թիֆլիսի իշխանութեան ներկայացուցիչները։

—

«Кавказъ» լրագրին հեռագրում են Նուխուց. «Այսօր, մարտի 5-ին, լուսադէմին, Բաշգէյնիկ գիւղում, յուսահատական դիմադրութիւնից և երկարատև հրացանաձգութիւնից յետոյ գիւղական պահապանների հետ, բռնվեց յայտնի փախստական, աւազակապետ Սադիխ-Դադաշ-օղլի, որ ծանր վէրք էր ստացվել գլխին, ազդրին և աջ ձեռքին։ Բռնվեցին նաև նրա ընկեր՝ Ինդուշ աւազակ Թուրթա Կամախանով և Գիհենուկի հինգ բնակիչներ, որոնք օգնութիւն էին ցոյց տալիս աւազակներին։ Բոլորն էլ ուղարկվեցին Նուխու բանտը։

—

Պետերբուրգի գիւղատնտեսների ընկերութեան մէջ, փետրվարի 26-ին, իշխան Ուրուսով մի զեկուցում կարդաց—«Գիւղատնտեսական անասնաբուծութեան մի նոր ճիւղ» վերնագրով, որի մէջ նա ապացուցանում է այծեր պահելու և բազմացնելու նպատակայարմարութիւնն և օտակարութիւնը։ Այծերի քանակութիւնը արտասահմանում—Ֆրանսիայում, Գերմանիայում և եւրոպական մի քանի երկրներում—շատ աւելի է, քան մեզանում։ Այծերի կաթը շատ լաւ կարող է փոխարինել ծծկեր երեխաների համար մայրական կաթը. այդպիսի փորձերը մեծ աջողութիւն են գտել օրապակաս երեխաների Պետերբուրգի ապաստարանում։ Այծերը հաղուագիւտ դէպքերում միայն հիւանդանում են տուբերկուլեոզով։ Նրանց պահելը հեշտ է և աւելի էժան է նստում քան կովերինը։ Զեկուցանողը առաջարկում էր 1, քաջալերել այծապահութիւնը՝ տալով մեծ քանակութեամբ այծ պահողներին պրէմիաներ, և մտցնելով այծապահութեան դասընթացքը գիւղատնտեսական ուսումնարաններում։ 2, հիմնել առանձին կայարաններ այծի կաթով կերակրվելու համար։

—

Զորեքշաբթի, մարտի 5-ին, Թիֆլիսի արտիստական ընկերութիւնը տուեց իր հերթական երեկոյթը, որ ունէր առանձին հրապոյր իր կազմութեամբ և որ գրաւել էր ահագին բազմութիւն։ Բեմի վրա ներկայացվեցին տարվայ չորս եղանակները ընծրող տեսարաններով։ Եղանակները փոփոխվում էին յաջորդաբար միմիայն շնորհիւ շարժական բեմի, որ պատում էր իր կենտրօնի շուրջը։ Այնուհետև տեղի ունեցան ներկայացում և համերգ, որի ժամանակ կարդացվեցին կուպլէտներ քաղաքի կեանքի օրվայ չարիքներից։ Համերգից յետոյ սկսվեցին պարեր։

—

Պետերբուրգի ռուսաց հոգևոր ակադեմիայի պրոֆէսօր Լօպուխին, ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագիրները, ձեռնամուխ է եղել կազմելու առաջին էնցիկլօպէդիական բառարանը Ռուսաստանում եկեղեցական գիտութիւնների վերաբերմամբ։ Բառարանում զետեղված կը լինեն նաև պատմական տեղեկութիւններ Ռուսաստանի և արտասահմանի եկեղեցական կեանքի մասին և եկեղեցական նշանաւոր թէ ժամանակակից և թէ պատմական գործիչների կենսագրութիւններ։

—

Մարտի 4-ին Թիֆլիսի այգեգործական ուսումնարանում բացվեց այդ ուսումնարանի մեղուանոցը, որի կառավարութիւնը յանձնված է մեղուապահութեան դասատու Ստրուվիլոյին։

—

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Խստաշունչ ձմեռը նոր մուտք գործեց մեզ մօտ. դեկտեմբեր և յունվար ամիսները բաւական տաք անցան մեզանում. բայց փետրվարի կէսից սկսեց մեծ ձիւն գալ և հաստ շերտով ծածկեց սար ու ձոր, ցուրտ ու բուքն էլ հետը... Աղքատի դրութիւնը անելանելի է. նա օրեր էր համարում գարնան հասնելու, իսկ այսօր փողոցները ընկած վառելիք է հարցնում. սակայն նրան չէ աջողվում ոչ փայտ և ոչ ածուխ գնել, գներին չափազանց թանգանալու պատճառով... Ցրտերը մի նոր պատուհաս էլ բերին մեր քաղաքը. դա ինֆլուէնցա հիւանդութիւնն է, որ մի տան մէջ չարքին պառկեցնում է մի քանի անհատներ»։

—

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են. «Կարսում մի միդասեան ծխական երկսեռ ուսումնարան կայ, որտեղ սովորում են մօտ 170 աշակերտներ և աշակերտուհիներ, թէ հայ-կաթոլիկ և թէ հայ-լուսաւորչական։ Ուսումնարանին կից գտնվում է հայ-կաթոլիկ եկեղեցին, որն ունի երկու վարդապետ, բայց ոչ մի տիրացու—եկեղեցական սպասաւոր։ Այս վերջին պաշտօնը մնացել է դպրոցի աշակերտներից մի քանիսի վրա, որոնք վարդապետի ստիպմամբ պիտի ծառայեն Աստուածային ճաշին և երեկոյեան. էլ չեմ խօսում օրինակատարութիւնների մասին։ Աստուածային և երեկոյեան ծառայութիւնը մի կողմ մնայ, արդեօք իրաւունք ունեն վարդապետները «ծխական դպրոց է, հապա ինչպէս կուզես» խօսքերը փաստ ունենալով ճաշին աշակերտներից մէկին—երկուսին դասից դրկել այն օր։ Աշակերտը աշակերտ պէտք է լինի։ Բողոքում ենք այդ վարմունքի դէմ և խնդրում ենք հոգաբարձուներին և հայ-կաթոլիկ համայնքին վերջ դնել այդ տգեղ սովորութեան»։

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ մեզ գրում են. «Այս ձմեռ կատաղած շուն էր երևացել Բարալէթ գիւղի կողմերը և խածել էր երեք գիւղացու ու բազմաթիւ շների։ Այդ երեք գիւղացիներից մէկը, Քօթելիա գիւղացի մի դժբախտ վրացի, հիւանդանում է ջրախութեամբ և սոսկալի տանջանքներով մեռնում։ Միւս երկու գիւղացիներին ուղարկել են Թիֆլիս—Պատեօրեան կայարանը։ Ցեռոյ կատաղած շներ երևացին Արագօվա, Կուլիկամ և այլ գիւղերում, իսկ վերջերս՝ նաև քաղաքում։ Այստեղ կատաղած շունը կծեց մի երեխայի, որին նոյնպէս ուղարկեցին Թիֆլիս։ Հիմա, իբրև զգուշութեան միջոց, քաղաքային վարչութիւնը կարգադրել է, որ փողոցներում և հրապարակներում վխտացող անտէր շներին բռնեն և թունաւորեն։ Մինչև հիմա այդ ձևով մօտ 60—70 շուն է սպանվել»։

—

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Ռուսաստանի զանազան նահանգներից վերաբնակութիւն են հաստատում մեր քաղաքի շրջակայքում գաղթականներ. արդէն հասել են մօտ 45 ընտանիք և տեղ ընտրել Խօջալարի կողմերում. իւրաքանչիւր տղամարդին տրվում է հինգ դեսեատին հող՝ տէրութիւնից»։

—

ԲԱՂԱՆԻՍ գիւղից (Ղազախի գաւառ) մեզ գրում են. «Ղազախի գաւառում ներկայումս գաւառապետ է պ. Արնօլդ, որին մեր գաւառացիք դեռ Բօրչալուի գաւառում եղած ժամանակից են ճանաչում։ Ցարգելի գաւառապետը ժողովրդական մարդ է. սիրով ընդունում է թէ հարուստ և թէ աղքատ գիւղացուն, թոյլերին չէ արհամարհում. նրա համար ամենքը հաւասար են. լսում է գիւղացիների ցաւերը, բաւականութիւն է տալիս, որքան հնար է։ Ինչպէս պ. գաւառապետը սիրում է ժողովրդին՝ այնպէս էլ վերջինս է յարգում ու պատում պ. Արնօլդին. սրբութեամբ և ճշտութեամբ կատարում է գիւղացին սրա հրամաններն, և այս է պատճառն, որ այն, ինչ ուրիշ գաւառապետներն կատարում էին մի քանի տարիների ընթացքում, սա յաջողութեամբ կատարել է մի քանի ամսում։ Ղազախի նման գաւառում, որտեղ ամեն օր մարդասպանութիւն, գողութիւն և այլ զզուելի չարագործութիւններ էին կատարվում, այժմ համարեա խաղաղութիւն և հանգստութիւն է տիրում։ Պ. գաւառապետը լսածներով չէ բաւականանում, այլ որքան հնարամանքներ ներում են՝ ինքն անձամբ ստուգում է լսածները։ Անցեալ օրերում մի գիւղացի ասում է, թէ Ուրքմազդուի Բիննաթ

քոխվէն գողացած կենդանիներ է պահում և ծախում, յիշել էր և մի քանի ուրիշ գողերի անուններ. պ. Արնօլդը նոյն օրն երեկոյեան հասարակ շորեր է հագնում, փոխել է տալիս և երկու ստրաժնիկների շորերը և գնում են վերոյիշեալ գիւղը. ինքն հեռու է կանգնում, ոստրաժնիկներին ուղարկում է տուն և դուրս է կանչում։ Բիւնաթը երդվում է, թէ ինքը գողացած ապրանք չունի ծախելու կամ փոխելու։ Այնտեղից նա գնում է Ուսէին Բէգլուն, որտեղ դարձեալ ոչինչ չէ գտնում, գնում է Արբիլու, յիշված գողին դուրս է կանչում և ասում. «եթէ գողացած եղներ, կովեր ունիս՝ փոդով ծախիր կամ փոխիր մեզ հետ, մենք էլ գողացած եղներ ունենք»։ Գողը խոստովանվում է, որ միայն մի գողացած էշ ունի. «էշը մեր բանը չէ» ասում է գաւառապետն ու հեռանում։ Մի քանի օրից յետոյ էշի տէրը գաւառապետի մօտ է գալիս ու գանգատվում։ Գաւառապետը մարդ է ուղարկում և գողից առնում է 20 ր. տուգանք ու էշի տիրոջը տալիս, իրան էլ բանտ ուղարկում։ Այսպիսով պ. գաւառապետը գիւղացու ամենասիրելի թշնամիներից մէկին ոչնչացրել է. մնում են երկու թշնամիներ— տգիտութիւնը, որի մէջ է և ծուլութիւնը, և կարկուտը։ Ղազախի նման բազմագիւղ գաւառում 4—5 ուսումնարաններ կան։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Թէհրան, փետրվարի 4-ին

Երեկ, Վարդանանց տօնի երեկոն՝ յուսապրնդումի և ուրախութեան երեկոյ մը եղաւ Թէհրանցիներուն համար։

Բացի Վարդանանց հանդէսէն՝ որը տօնվեցաւ Հաւանապատի Նորահաստատ դպրոցին մէջ, առաջնորդ Այվազեան սրբազանի նախագահութեամբ, հասարակութեան վերապահված էր սիրուն անակնկալ մը։

Հանդէսը սկսելէ առաջ, Սահակ սրբազան բեմ բարձրանալով՝ հաւաքված երկտեռ բազմութեան տուաւ հետեւեալ աւետիսը։

Ինչպէս ձեզ յայտնի է, եկատերինօդարբնակ պարսկահայ պ. Ե. Աւետեան՝ իր ամուսնութեան առիթով փոխանակ օժիտի՝ 30,000 ռուբլիի տոկոսը յատկացուց աղջկանց ուսումնարանի մը բացումին, որը պիտի կրէր իր կնոջ անունը։ Այդ ուսումնարանը պիտի լինէր Հաւանապատի Նորակառոյց դպրոցը։ Բայց նկատելով, որ այդ գումարի տոկոսը անբաւական է ուրոյն ուսումնարանի մը գոյութիւնը ապահովելու, Թէհրանի ազգային դպրոցներու հոգաբարձութիւնը՝ յարգելու համար պարոնի բարի ցանկութիւնը, Թագուհեան անունը առաւ Տարվազէ-Ղազուինի աղջկանց ուսումնարանին։

Վերջերս, սակայն, պ. Հ. Առաքելեան Թէհրան գալով մեզի և հոգաբարձութեան յայտնեց, թէ պ. Աւետեան՝ կը ցանկայ կրթական գործին նպաստել աւելի լայն չափով. դիտաւորութիւն ունի Նորակառոյց դպրոցը՝ նիւթապէս ապահովել՝ կոչելով զայն «Ազգային Թագուհեան ուսումնարան»։

Ահա իմ ձեզ տալիք աւետիս. աւելի մանրամասն կը բացատրէ հիմա ինքը՝ պ. Առաքելեան։

Սրբազանէն յետոյ խօսք առաւ Առաքելեան։

Նախ խօսեցաւ օրվան տօնին վրա մէկ քանի բառով. ըսաւ թէ պատերազմները՝ ընդհանրապէս, պէտք է անիծել ու դատապարտել. բայց բացառութիւն պիտի համարել այն կռիւները, որ կը մղուին ոչ թէ աշխարհակալութեան նպատակով, այլ իր հայրենի օջախը օտարի ոտնձգութիւններէն ազատ պահելու, ազգային ինքնուրոյնութիւնը պահպանելու համար։ Հիմա, շարունակեց Առաքելեան, փոքր ազգութիւնները իրանց գոյութիւնը կարող են պահպանել գիտական լուրջ կրթութեամբ, դպրոցներով միայն։ Պարսկահայերու ամբողջ ապագան կախված է բարեկարգ դպրոցներու գոյութենէն։ Բայց որովհետև պարսկահայերը նիւթական ապահով ու լայն միջոցներ չունին կրթական այդ նպատակը իրագործելու, որովհետև պարսկահայերը՝ իրենց գլխին թողած՝ չեն կարող բարեկարգ դպրոցներ ունենալ՝ ուրիշ տեղերու իրենց արիւնակից և կարող եղբայրներուն վրա բարոյական մեծ պարտք կը ծանրանայ օգնել պարսկահային։ Այդ պարտականութիւն աւելի ստիպողական է մանաւանդ այն հայերուն համար, որ պարսկաստանցի են և կը գտնվին նիւթական ապահով վիճակի մէջ։

Այդ կարգի անձերէն է ահա պ. Յովհաննէս Աւետեան, որ ցանկանալով օգնել կրթութեան կարօտ իր հայրենակիցներուն, իր ամուսնութեան առիթով՝ 30,000 ռուբլիի տոկոսը յատկացուց իր կնոջ անունով ծխական դպրոցի մը բացումին։

Որքան ինձի յայտնի է՝ պ. Աւետեան դիտաւորութիւն ունի ապագային աւելի մեծ ծրագրով և ծաւալով նպաստել պարսկահայերու կրթական գործին։ Մեծ յոյս կայ, որ պարոնը Թէհրանի մէջ բանայ նոյն-իսկ միջնակարգ դպրոց մը։ Առ այժմ իբրև անմիջական գործադրութիւն իր դիտաւորութեան՝ «Թագուհեան» անունը պէտք է կրէ ոչ թէ Տարվազէ-Ղազուինի աղջկանց ուսումնարանը, այլ և Հաւանապատի Նորակառոյց դպրոցը՝ երկտեռ և երկդասեան ծրագրով։ Պ. Աւետեան ի հարկէ պիտի փճարէ հարկ եղած բոլոր ծախքերը և առաջիկայ սեպտեմբերին հանդիսաւոր կերպով պիտի բացուի դպրոցը, որ պէտք է կոչվի «Ազգային Թագուհեան»։

Այս մասին խորհրդակցութիւններ ունեցանք արդէն հոգաբարձութեան հետ, և հաւատացած եմ, որ կնքվելիք համաձայնութիւնը չուտով կարժանանայ պ. Աւետեանի հաւանութեան։

Ահաւասիկ անակնկալը որուն ակնարկեցի քիչ վերը։ Մէկ կողմ թողելով միջնակարգ ուսումնարանի հարցը, եթէ պ. Աւետեան իրագործէ իր աւելի համեստ ծրագիրը, այն է ապահովել Հաւանապատի Նորահաստատ դպրոցը՝ մեծ բարիք մը բրած պիտի ըլլայ ամբողջ Թէհրանցիներուն։ Գրած եմ արդէն, թէ այս նոր դպրոցը չը ստեղծված՝ Տարվազա-Ղազուինի ուսումնարանը անգամ տարեկան բաց ունէր։ Արդ պ. Աւետեան, ապահովելով նորը՝ ապահոված պիտի ըլլայ նաև հինը, քանի որ, իմ մասնաւոր տեղեկութիւններուս նայելով պարոնը ոչ միայն հարկ եղած գումարը պիտի յատկացնէ դպրոցական գործի վարումին, այլ և արժէքը պիտի փճարէ նոր դպրոցի շինութեան և գեղեցիկ՝ որը ազգի սեպհականութիւնն է։ Այս վերջին գումարը լայնօրէն պիտի բաւէ Տարվազա-Ղազուինի երկտեռ դպրոցին։

Պէտք կայ արդեօք աւելցնելու, որ հասարակութիւնը չափազանց գոհ մնաց իրեն տրված աւետիսէն։ Լուրը այնքան մեծ խանդավառութիւն առաջ բերաւ մանաւանդ երիտասարդութեան մէջ, որ խումբ մը երիտասարդներ մասնաւորապէս խնդրեցին առաջնորդ սրբազանէն, որ երկրորդ անգամ բարձրանալով բեմ՝ Թէհրանի հասարակութեան երախտագիտութիւնը յայտնէ պ. Աւետեանի և յատուկ շնորհակալութիւնը պ. Հ. Առաքելեանի իր գործ դրած ջանքերուն համար։ Բան մը, որ սրբազանը կատարեց սրտով և յօժարութեամբ։

Այնուհետև տեղի ունեցաւ Վարդանանց հանդէսը՝ որի միջոցին խօսեցաւ սրբազանը։ Մէկ քանի կենդանի պատկերով և շարք մը արտասանութիւն, երգ ու պարով վերջացաւ տօնը։ Տրուեցաւ նաև մանկական ներկայացում մը— «Վարդագոյն գլխարկը», որը աւելի կամ պակաս յաջողութեամբ խաղացին աշակերտուհիները։

Տիգրան

ԼԵՀԵՐՈՒ ԴԻՄՈՒՄԸ ՄԱՑԻ ԱԹՈՌ

—

Ժամանակին գրուած էր արդէն «Սուրհանդակի» մէջ թէ՝ Ս. Կաթողիկոսը, ընդունելով հռոմէական Եկեղեցիէն բաժնուելով ուրոյն եկեղեցի կազմող կարգ մը Լեհացիներու դիմումը, արտօներ է Ամերիկայի Առաջնորդ Սարաֆեան եպիսկոպոսը, որ անոնց ներկայացուցած քահանայացուները ձեռնադրէ և միանգամայն փափաքած էր ունենալ այդ Լեհացիներու դաւանութեան մասին կարեւոր տեղեկութիւններ։ Լեհացիները իրը մէկ ամիս առաջ ժողով գումարելով, որոշեր են պատասխանել Ս. Հայրապետին պահանջներուն, և իրենց գումարման մէջ տրուած որոշումը հանրագրութեամբ ղրկած են Սարաֆեան եպսկ ի։ Այդ հանրագրութիւնը ստորագրած են Լեհացի բոլոր եկեղեցականները և ժողովին դիւանը, և զայն ամերիկեան կառավարութեան հաստատել տուած են։ Այդ հանրագրութեամբ կը խոստանան. Ա. Քանի որ ձեռնադրութիւն պիտի առնեն Ն. Ս. Օծութենէն, զայն՝ իբր հոգևոր պետ իրենց եկեղեցւոյ՝ յիշել իրենց եկեղեցիներուն մէջ։ Բ. Ասկէ վերջը եպիսկոպոսական ձեռնադրութիւնները միշտ Ս. Էջմիածին, կաթողիկոսներուն կատարել տալ։ Գ. Իրենց եկեղեցական առանձին կազմակերպութիւնը պահելով հանդերձ, կրօնական խնդիրներու մէջ, կաթողիկոսներու իրաւասութեան ներքև մնալ։ Սարաֆեան եպիսկոպոս այդ գիրը արդէն ղրկած է Էջմիածին։ Առաջին երկու կէտերը բաւական որոշ և հետևաբար ըմբռնելի են, սակայն վերջին կէտը մութ և անհասկնալի կը մնայ. պէտք էր որ քիչ մը աւելի մանրամասնուէր, թէ որոնք են այդ ակնարկուած կրօնական խնդիրները։ Թերևս բաւ համարուի այսքան ծանօթութիւն և կամ աւելի մանրամասն տեղեկութիւն պահանջուի այնպիսի գործի մը համար, որ կարևորութիւն ունի եկեղեցական տեսակէտով։

«Սուրհանդակ»

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Թէ ինչ աստիճան թիւրքերը թշնամաբար են տրամադրված դէպի քրիստոնեաները Կ. Պոլսում, ապացուցանում է «Новый Дневникъ» լրագրի Կ. Պոլսի թղթակցի հաղորդած հետևեալ տեղեկութիւնը.—Այն հրացանաձգութեան ժամանակ, որ տեղի ունեցաւ Կ. Պոլսի ոստիկանութեան և մի խումբ աւազակների մէջ, որոնք կողոպտել էին թիւրքական մայրաքաղաքի խանութներից մէկը՝ թիւրք ազգաբնակութիւնը իսկոյն ապառաջինվեց և կամենում էր թափվել Կ. Պոլսի եւրոպական թաղը՝ կոտորելու «գեաւուրներին»։ Ղալաթա-Սարայ թաղի ոստիկանապետին մեծ դժուարութեամբ աջողվեց հանգստացնել թիւրք կատաղած ամբոխին և այս անգամ զարհուրելի դժբախտութեան առաջն առնել։ Առհասարակ քրիստոնեաները և առանձնապէս բոլգարները ահ ու սարսափով են անցնում օրերը Կ. Պոլսում։ Լուրջ հիմքեր կան երկիւղ կրելու, որ Կ. Պոլսի բոլգարները չեն խուսափի մի այնպիսի ողբերգական վիճակից, որ մի քանի տարի առաջ բաժին ընկաւ նրանց հաւատակից հայերին։

—«New-Iork Herald» լրագրի ասելով, Պարիզի գրական շրջաններում, որոնք մօտ են գիտութիւնների ակադեմիային, շատ են խօսում այն թեկնածուների մասին, որոնք պէտք է բռնեն նորերումս վախճանված Գաստոն Պարիսի մահուամբ բացված տեղը Ֆրանսիական «անմահների» շարքում։ Այն թեկնածուների թիւում, որոնք, ինչպէս երևում է, ամենից աւելի յոյս կարող են ունենալ գրաւելու այդ տեղը, անուանում են և Վալդէկ-Ռուսսոյին։ Ֆրանսիական նախկին առաջին մինիստրը շատ բարեկամներ և իր հեռատեսական տաղանդի յարգողներ ունի ակադեմիկոսների մէջ, որոնք շատ կը ցանկանային տեսնել նրան «անմահների» մէջ։ Վալդէկ-Ռուսսոյի ընտրութիւնը շատ մեծ քաղաքական նշանակութիւն կարող էր ունենալ։ Յայտնի չէ դեռ ևս, թէ ինչպէս կը վերաբերվի այդ հարցին կոմս Օսսոնվիլ, որ ահագին ազդեցութիւն ունի ակադեմիայում։ Ի հարկէ նացիոնալիզմի ներկայացուցիչները ակադեմիայում, ինչպէս են Ֆրանսուա Կոպպէ, Լէմէտր և Վանդալ, կարծիք են յայտնում գրականապէս Վալդէկ-Ռուսսոյի ընտրութեան դէմ։ Թեկնածուների թիւում տալիս են նաև Մարսէլ Պրէվոյի անունը։

—«Daily Mail» լրագրին հաղորդում են Շանղհայից, թէ յեղափոխական նոր շարժումը Չինաստանում հետզհետէ աւելի և աւելի մեծ չափեր է ստանում։ Ապստամբները Գուանսի նահանգում ստացան կայսերական զօրքերից ռազմամթերք և փամփուշտներ։ Եօթը քաղաք այդ նահանգում արդէն գտնվում են ապստամբների ձեռին։ Չինական կառավարութիւնը Գուան-Սի նահանգում բոլորովին անզօր է։ Շանտուն նահանգում ազգաբնակութեան ատելութիւնը դէպի քրիստոնեաները ակնյայտնի կերպով երևաց քրիստոնեաների եկեղեցիների կործանմամբ։ Դրութիւնը այդ նահանգներում կրիտիքական է։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

5 մարտի

ԲԷԼԳՐԱԴ։ Մօնաստիրից և Ուսկիւբից միաձայն հաղորդում են, որ բոլգարական հրոսակախմբերը մի քանի գիւղերի ազգաբնակութեան ենթարկեցին ստիպողական հարկատուութեան 2-ից մինչև 100 ֆրանկի չափով։

ԲԵՐԼԻՆ։ «Köln. Zeitung» լրագրին Բէլգրադից հաղորդած տեղեկութեան համեմատ, կարծում են, որ մինիստրութիւնը կը վերակազմվի կամ նրա կազմից արմատականների դուրս գալով, կամ հրաժարական կը տայ ամբողջ կազմը։

Կ. ՊՕԼԻՍ։ Անգլիայի գործած ճնշման պատճառով, մինիստրների խորհուրդը զբաղվեց Ադէնից այն կողմը գտնվող հողերի սահմանորոշութեամբ, և բարենպաստ կարծիք յայտնեց անգլիական պահանջների առիթով։

ԼՕՆԴՕՆ։ Համանքների ժողով։ Ռէդմոնդ հարցնում է, թէ արդեօք ռուսաց կառավարութիւնը բողոք յարուցեց Բ. Դրան առաջ գերմանական օֆիցէրների ծառայութիւններով բացառապէս օգտվելու դէմ մակեդոնական ժանդարմէրիան վերակազմելու ժամանակ և արդեօք դիտաւորութիւն ունի անգլիական կառավարութիւնը առաջադրութիւններ անել Բ. Դրան այդ հարցի առիթով։ Կրանբօրն պատասխանեց, որ ռուսաց կառավարութիւնը կատարելապէս հականում է օտար ինստրուկտորների օգուտը մակեդոնական ժանդարմէրիայի մէջ, այն պայմանով միայն, որ նրանք չը լինեն մեծ պետութիւններից ոչ մէկից։ Կրանբօրնի պատասխանը հարցի երկրորդ մասին բացասական էր։

ԱԹԷՆՔ։ Թիւրքաց արտակարգ դեսպանութիւնը յանձնեց թագաւորին սուլթանի ինքնագիր նամակը, որի մէջ վերջինս սրտագին համակրութիւն է յայտնում դէպի յունական արքայական տունը և ժողովուրդը։

ԴՐԷԶԴԷՆ։ Գերմանական կայսրը ճանապարհ ընկաւ Բերլին. թագաւորը, թագաժառանգ պրինցը և պրինց Եօհանն-Գէօրգ ճանապարհ գցեցին նրան դէպի կայարան։ Երեկոյեան թագաւորը ուղևորվեց դէպի հարաւ։

ԿԱՀԻՐԷ։ Գերմանական թագաժառանգ պրինցի առողջական դրութիւնը Լուկաօրում բաւական է։

ԴՐԷԶԴԷՆ։ Հանդիսաւոր ճաշին պալատում սաքսօնական թագաւորը գերմանական կայսրի կենացն առաջարկեց, որը ապա խմեց թագաւորի կենացը։

ԱԹԷՆՔ։ Թիւրքաց արտակարգ դեսպանութիւնը հանդիսաւոր ունկնդրութեան ժամանակ յանձնեց թագաւորին «Նիշան-իֆթիկար» շքանշանը ադամանդներով. թագաժառանգ պրինցին յանձնվեց Իմթիազի շքանշանը և հարուստ ընծայ սուլթանից։ Թագաւորը և թագուհին մարտի 15-ին ճանապարհ կընկնեն Կօպէնհագէն։

Կ. ՊՕԼԻՍ։ «Kölnische Zeitung» լրագրի հաղորդած տեղեկութեան համեմատ, Մակեդոնիայում ժանդարմէրիա կազմակերպելու ժամանակ սկզբունք կը դրվի նշանակել այն տեղերում, ուր գերակշռում է քրիստոնեայ ազգաբնակութիւնը՝ քրիստոնեայ զանազան դաւանութիւններին և զանազան ազգութիւններին պատկանող ժանդարմներ։

ՄԱԴՐԻԴ։ «Heraldo» լրագրին Տանժէրից հաղորդում են, որ ապստամբութիւնը շատ առաջ է գնում և սուլթանի համար դժուար կը լինի ճնշել այդ ապստամբութիւնը։ Հնարաւոր է, որ թեկնածուն նորից յարձակողական դիրք բռնէ։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Սենատը վաւերացրեց 73 ձայնով 5-ի դէմ Պանամեան ջրանցքին վերաբերեալ դաշնագիրը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէոդորօվնա այցելեց Մեծ Իշխանուհի Եկատերինա Միխայլօվնայի անուան Կայսերական իգական հայրենասիրական ընկերութեան երեք դպրոցները, Կայսր Ալէքսանդր II-ի արհեստագիտական դպրոցը և երկրորդ Վասիլէվսկայա դպրոցը։

Ծովային մինիստրութեան հանդուցեալ կառավարչի հոգեհանգստին մարտի 5-ին ներկայ էին Թագաւոր Կայսրը, Թագուհի Կայսրուհի Ալեքսանդրա Ֆէոդորօվնա, Մեծ Իշխաններ Ալեքսէյ Ալեքսանդրովիչ, Միխայիլ Նիկոլայեվիչ և Ալեքսանդր Միխայլովիչ և շատ բարձրաստիճան անձեր։

ՊԵԿԻՆ։ Պետութիւնների ներկայացուցիչները խորհրդակցութիւն ունեցան չինական կառավարութեան յայտագրի վերաբերմամբ, որի մէջ նա մերժում է տալ պարտամուրհակներ պատերազմական վարձատրութիւն ստանալու համար, մինչև որ ներկայացուցիչները պետութիւնների քննութեան չը ներկայացնեն մաքսը ոսկով վճարելու հարցը։ Ներկայացուցիչների մեծամասնութիւնը յայտարարեց, թէ իրանք պնդում են իրանց պահանջի վրա պարտամուրհակները աւելի առաջ յանձնելու մասին, քան ոսկով մաքս վճարելու հարցի արձանագրութիւնը քննութեան կենթարկվի։ Ֆրանսիական և ռուսաց ներկայացուցիչները յայտնեցին, թէ իրանք ընդունում են Չինաստանի պահանջը՝ մաքսը ոսկով վճարելու մասին։

ԼՕՆԴՕՆ։ «Daily Telegraph» հաղորդում է, թէ համաձայն ամերիկական զեկուցման Մոնտէվիդէօից, 8000 հոգի ապստամբեցան կառավարութեան դէմ։ Մոնտէվիդէօի շրջակայում ապստամբութիւնը լուրջ կերպարանք է ստացել։ Ամերիկական նաւատորմիղը, որ գտնվում է Մոնտէվիդէօում, հրահանգ ստացաւ պաշտպանել ամերիկական շահերը։

ՄԵԼԻԼԵԱ։ Սուլթանի հօրեղբօր կազմակերպած արշաւախումբը, որ նպատակ ունէր թեկնածուի վրա յարձակվել յետևից՝ աջողութիւն չունեցաւ։

ԲՈՒԷՆՕՍ-ԱՅՐԷՍ։ Մոնտէվիդէօից զօրքեր են ուղարկված ապստամբած շրջանի զանազան կէտերը։ Այսօր Բօկա է գնում մի թնդանօթաձիգ նաւ։

6 մարտի

ԲԵՐԼԻՆ։ «Kölnische Zeitung»-ին հաղորդում են Բելգրադից, թէ այնտեղի լրագիրների ասելով՝ պրոֆէսօր Եագիչի անունը հանված է

սերբական ակադեմիայի անդամների ցուցակից նրա մի յօդուածի պատճառով, որ նուիրված էր մակեդոնական հարցին և որ զայրոյթ յարուցեց սերբական շրջաններում։

ՎԻԼՆԱ։ Այստեղով անցկացաւ Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆէօդորօվնա. գնացքը կանգ առաւ Լանդվարովում, որտեղ բախտ ունեցան Կայսրուհուն ներկայանալ գեներալ-նահանգապետ իշխան Սվեատոպոլկ-Միրսկի և նահանգապետ կոմս Պալէն։

ԱՍԽԱԲԱԴ։ Կարիքը անցած լինելով, փակվեց Խակէնսի շրջանի կերակրատունը, որ սահմանված էր Անդիժանի երկրաշարժից վնասվածների համար։

ՏԷՄՐԻԿ։ Առևտրական ծովագնացութեան գլխաւոր կառավարութիւնը յայտնեց, որ Տէմրիկի քաղաքային վարչութեան խնդրած 400,000 ռուբլին, որով պէտք է շինվի խոր գնացք՝ Ազովի ծովից Տէմրիկին մօտենալու համար, պետական գանձարանի հաշուի մէջ կը մտնէ 1904 թուին։

ՐԵԱԶԱՆ։ Բացվեց տնայնագործների և արհեստաւորների վարկային ընկերութիւն։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ «Кіевское Слово» լրագրի հատով վաճառելը դադարեցրած է 3 ամսով։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔՍԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀՐԱՒԷՐ

Մարտի 9-ին, կիրակի, ս. պատարագից յետոյ, ժամի 12-ին, Էջմիածնեցոց ս. Գէորգ եկեղեցում լինելու է ծխականների ժողով երէցփոխի նոր ընտրութիւն կատարելու։ Ուստի խնդրում եմ նոյն եկեղեցու յարգելի ծխականներին՝ յիշած օրը և ժամին շնորհ բերել եկեղեցի՝ ընտրութեանը մասնակցելու։

Թիֆլիսի հայոց եկեղեցիների բ. մասի գործակալ՝

2—3 Ղևոնդ քահանայ Մամիկոնեանց

Բերված են Լազոռեխից Թիֆլիս և ծախվում են «ԱՇԽԱՏԱՆՔ» ընկերութեան մնկարանից

Պտղատու ծառեր

1—3 տարեկան, արտասահմանի և տեղական տեսակներից՝ դիմել Աֆրիկեանին Пушкинская ул. магазинъ Меликъ-Бахтамянца.

4—10

ԲԺԻՇԿ Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

Ընդունում է մասնաւորապէս սիֆիլիս, մորթու և վեներական ախտ ունեցող հիւանդներին։ Քիմիկո-միկրոսկոպիական կաբինէտ, որտեղ ընդունվում են կաթի, խորխի, մէզի և արեան անալիզներ։

Առաւօտեան 11—1 ժ.
Երեկոյեան 4—6 ժ.

Բերուսովսկայա փողոց № 41. տուն Արարատեանի։ Бебутовская ул. № 41. Домъ Араратова.

66—150

ԲԺԻՇԿ

Գ. Մ. ԱՖՐԻԿԵԱՆ

կազմում է խորհուրդներ տեղիս պրոֆէսորների հետ՝ Վիէննա եկող հիւանդների համար։

Dr. Med. Paul Afrikian. Wien. VIII., Langegasse, 60, Thur 1.

14—15

Շուտով լոյս կը տեսնի
Մ. ՊՇԻԿԹԱՇԼԵԱՆ

ՏԱՂԵՐ

Հեղինակի պատկերով և Լէօի առաջաբանով

2—3

ՀԱՐԱՒԱՅԻՆ ՊԱՐԻԿԱՑԱՆ
ՊԱՐՍԻՑ ԾՈՅԻ
ԶԷՅԹՈՒՆԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԲՈՒՇԻՐՈՒՄ

(Հիմված 25 տարուց ի վեր)

Հաղորդում է մանրամասն տեղեկութիւններ Պարսից ծոցի առևտրի մասին, ունի ներկայացուցիչներ հարաւային Պարսկաստանի նշանաւոր կենտրոններում, ընդունում է յանձնարարութիւններ, գնում եւ վաճառում է ապրանքներ, փոխադրում է Եւրոպայից Պարսկաստան եւ Պարսկաստանից Եւրոպա, դիւրամատչելի պայմաններով.—Հասցէ՝. Zeytoon C. G. Buchier Persian-Gulf.

75—100

ՀՐԱՒԷՐ

Կիրակի, մարտի 9-ին, ս. պատարագից յետոյ, ժամի 1-ին, Թանդոյեան ս. Աստուածածին եկեղեցում լինելու է ծխականների ժողով, եկեղեցու 1902 թ. հաշիւները քննելու։ Ուստի խնդրում եմ յարգելի ծխականներից ներկայ գտնվել ժողովին։

Երէցփոխ՝ Խաչատուր Տէր-Մարգարեան

1—3

Լոյս տեսաւ և վաճառվում է բոլոր գրավաճառանոցներում

ՄԿՐՏԻՉ ՄԱՐԻԿԵԱՆՑԻ

ՄԱՐՕԻ ԱԼԲՕՄԸ

ԲՍՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Գինն է 20 կոպէկ

Հրատ. Աւետիս Մ. Տէր-Սարգսեանցի
Դիմել Սարգիս Մարիկեանցին, Գոլովինսկի № 3։

1—4

50,000

ծառեր փշատերև անտառի, եղևնի և շոճի, վեց վերշոկ և աւելի, տրվում են կտրելու իշխանուհի Մարիա Իոսիֆովնա Զավախովայի կալուածքում։ Կալուածքը գտնվում է Անդրկովկասեան երկաթուղու Գրակալի կայարանից տասն և հինգ վերստ հեռաւորութեան վրա։ Բացի սրանից կալուածքում կան և ուրիշ տեսակի ծառեր—չինար, կաղնի, բոխի, աճառի և կեչի։ Տեղեկութիւններ ստանալու համար խնդրում են դիմել իշխանուհի Զավախովային—Сел. Ховле, Горійскаго уѣзда, Тифлисск. губ. և Карсъ, князю Джавахову.

2—20

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՑՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ հոգաբարձութիւնը հրաւիրում է մրցման անձանց, որոնք կը ցանկանան ընդունել դպրոցական այրված կրպակների վերաշինութեան և նրանց վրա երկրորդ յարկի կառուցման աշխատութիւնները. այդ կալվածքը գտնվում է քաղաքիս 3 մ., Ռուսաց փողոցում։ Պայմանների մասին կարելի է տեղեկանալ հոգաբարձական դիւանատունը, ամենայն օր, բացի տօներից, մինչև մարտի 12-ը ժամի 10—2։

3—4

„ԱՐՕՐ“ ՏՊԱՐԱՆԸ

կարճատև դադարումից յետոյ դարձել է մեր սեփականութիւն և վերսկսել է տպարանական բազմատեսակ պատուէրներ ընդունել։

Պատուէրները կատարվում են մաքուր, ժամանակին և բարեխիղճ գներով։

Տպարանին կից կայ կազմարան, դծարան և թղթավաճառանոց։

Սրբագրական բոլոր աշխատանքը ուրախութեամբ և առանց վարձատրութեան կատարում ենք։

Հայ թարգմանիչներին և գլխաւորապէս գրողներին տրվում է որոշ զիջում։

4—6 ՏՊԱՐԱՆԱՏԷՐ ԺԱՄՀԱՐԵԱՆ

ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ ԳՐԱԽԱՆՈՒԹՈՒՄ

վաճառվում են հետեւեալ գրքերը

Երկրագործական անհրաժեշտ գիտելիքներ. Գ. Ղազարեանի, կազմ. 90 կ.
Գիւղատնտեսական գործիքներ և մեքենաներ (250 նկարով) Խանաղեանի 50 կ.
Անբերելոյթ հողագործ (կարմիր—ճիճու) թարգմ. Լ. Մ.—Ադամեանի 7 կ.
Այգետիրական օղեգործութիւն, Պետրոսեանի 40 կ.
Պատուաստ և պտուղ չորացնել (26 նկարով) Զելինսկու 10 կ.
Զինուորական կանոնագրութիւն, Կովկասի համար Խ. Մալումեանի 30 կ.
Առևտրական—տնտեսական աշխարհ, Կ. Թուխմանեանի 1 ր. 50 կ.
Զեւագիտութիւն, զննական մեթոդով, Մալաթեանի 60 կ.
Պիտանի գիտելիքներ, տպ. Նիւ-Եորքում, Թորոսեանի 1 ր.
Ինչպէս են կազմում գրքեր (տեղեկութիւններ կազմ. մասին) 25 կ.
Առձեռն ամերիկեան բառարան անգլիերեն—Հայերէն, Թորոսեանի 3 ր. 50 կ.
Ուղեցոյց գինեգործութեան, պատկերներով Կ. Մելիք-Շահնազար. կազմ, 80 կ.
Նախագիտելիք բուսաբանութեան, Ս. Քիշմիշեանի 1 ր.
Ուղեցոյց գործնական չերմատպահութեան, պատկերներով, Կ. Մ.-Շահն., 40 կ.
Վազի մշակութիւնը, պատկերազարդ Նոյնի 1 ր.
Գործնական հաշուապահութիւն, Տիւզենճեանի, կազմով 3 ր. 50 կ.
Գրպանի ատլաս, Պ տպագ. փառակազմ, հայր Էփրիկեանի 1 ր. 75 կ.
Գործնական բարոյագիտութիւն, Մ. Արամեանի 80 կ.
Հանքաբանութիւն, պատկերազարդ, հայր Մենէվիշեանի, կազմած, 1 ր.
Պատկերազարդ Բուսաբանութիւն, հայր Մէնէվիշեանի, կազմած, 2 ր.
Մարդաբանութիւն, թարգմ. Ե. Լալայեանցի 40 կ.
Ատամների առողջապահութիւն, դոկտոր Իւթիւճեանի 25 կ.
Մանկութիւն, բացատրական ձեռնարկով, Զ. Գրիգորեանի, պատկերազարդ, 50 կ.

Գրքերը կարելի է ստանալ և կազմված։

Դիմել՝ Тифлисъ. Книжный магазинъ «ГУТТЕНБЕРГЪ». Г. Галустяну, Лорисъ-Меликовская ул. № 11.

2—3

„Փ. Ն. ՓՐԻԴՕՆԵԱՆ“
ԿՕՆՖԷՏԻ ԵՒ ՇՕԿՕԼԱԴԻ ԳՈՐԾԱՐԱՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Կովկասեան գիւղատնտեսական ցուցահանդէսում մեր պատրաստած ապրանքները արժանացան—Կովկասում կոնֆէտի արդիւնաբերութեան

ՄԻԱԿ ՄԵԾ ԱՐԾԱԹԵԱՅ ՄԵԴԱԼԻ

Առանձնապէս յանձնարարում ենք. ՌԱՀԱԹ-ԼՈԿՈՒՄ։, կարամել «ԻԻԲԻԼԻՑՆԱՑԱ» եւ տեսակաբակ բարձր յատկութեան կարամէլներ մրգեղէնով։

Գործարանում աշխատում են մայրաքաղաքի նշանաւոր վարպետներ։

Պատուէրներով դիմել. Թիֆլիս, Պավլովսկայա փողոց, սեփական տուն
Գործարանի հեռախօս № 362, գործարանական խանութինը № 772։

99—100

Մոսկվա 1865 թ. Մոսկվա 1882 թ.
Ս.-Պետերբուրգ 1870 թ. Նիժնի-Նովգորոդ 1896 թ.

ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐԻ

ԵՒ ՐԷՏԻՆԻ ՈՒՐԻՇ ԻՐԵՂԷՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ՊԱՐԳԵՒ (GRAND-PRIX)

Պարիզի ցուցահանդէսում տրված է Ռուսաստանից ՄԻՄԻԱՅՆ

ՐԷՏԻՆԻ ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱՅԻ ՌՈՒՍ-ԱՄԵՐԻԿԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ

Ով հիմնված է 1860 թուականին

Խնդրում են ՐԷՏԻՆԻ ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐ գնելիս ուշադրութիւն դարձնել կրունկների հետեւեալ կնիքի վրա



Անաւանդ ընկերութեան հիմնարկութեան «1860» թուականի եւ «Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ», խօսքերի վրա՝ կարմիր եռանկիւնու մէջ (գործարանի կնիքը)։

ՄԵԾԱՊԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԾԱԽՍ ԿԱՏԱՐՈՒՄ Է

„ԼԷՕՊՕԼԴ ՆԷՅՇԷԼԷՐ“ առեւտրական տունը

Ս.-Պետերբուրգում, Մոսկվայում, Ռիգայում, Օդէսայում, ԲՈՏՕՎՈՒՄ ԴՕՆԻ ՎՐԱ Եկատերինոսլաւում, Բիլուտինում եւ Խարկովում.

88—95

Дозволено Цензурою. Тифлисъ, 6 Марта 1903 г.
Электропечатная Груз. Изд. Т—ва, Б.-Ванкская ул.